ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 03-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 Թ-Ի ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝ **ավագանին**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել Շահումյան համայնքի ավագանու 2021թ-ի փետրվարի 26-ի նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

2021թ-ի փետրվարի 26-ի թիվ 02 նիստի

1. Շահումյան համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման հնգամյա ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին:
2. Շահումյան համայնքի 2021թ-ի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:
3. ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի ավագանու անդամի լիազորությունը վաղաժամկետ դադարեցնելու մասին:
4. ՀՀ Լոռու մարզի Շահումյանի համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 04-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով՝ Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել Շահումյան համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել 2020 թվականին Շահումյան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելված 2-ի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված 1
Շահումյան համայնքի ավագանու
2021թ-ի փետրվարի 26-ի թիվ 04-Ա որոշման

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ-Ի ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Եկամուտների անվանումը	2019թ. Բյուջե			2020թ. Բյուջե		
		պլան	փաստ.	կատ %	պլան	փաստ.	կատ %
1	Հողի հարկ	3244,6	2821.9	87	3217.6	2524.2	78.5
2	Գույքահարկ	5981.5	5890.2	98.5	7417.1	6496.9	87.6
3	Տեղական տուրք	183.5	189.7	103.4	239.0	249.0	104.2
4	հողի վարձ. վճար	1300.0	1701.0	130.9	1522.0	1615.2	106.1
5	Այլ ոչ հարկային եկամուտներ	300.0	275.0	91.7	300.0	429.5	143.2
6	Տեղական վճարներ	2370.0	2500.7	106	2480.0	1010.8	40.8
	Ընդամենը սեփական եկամուտներ	13379.6	13378.5	100	15175.7	12347.6	81.4

Սեփական եկամուտներ

Շահումյան համայնքի սեփական եկամուտների հավաքագրումը 2020թ. 15175.7 հազար դրամ պլանի դիմաց կազմել է 12347.6 հազար դրամ կամ 81.4%, 2019թ.-ին փաստացի հավաքագրումը կազմել է 13378.5 հազար դրամ կամ 100.0%: Սեփական եկամուտների փաստացի մուտքերի համեմատությունը 2019թ-ի նկատմամբ կազմել է 92.3%, կամ նախորդ տարվա նկատմամբ պակաս է հավաքագրվել 1030.9 հազար դրամ:

Հողի հարկ

2020թ. Շահումյան համայնքում հողի հարկի հավաքագրումը 3217.6 հազ. դրամ պլանի դիմաց կատարվել է 2524.2 հազար դրամ կամ 78.4%, 2019թ.-ին փաստացի հավաքագրումը կազմել է 2821.9 հազար դրամ կամ 87%: 2019թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 89.4%, կամ նախորդ տարվա համեմատությամբ պակաս է հավաքագրվել 297.7 հազար դրամ: Հողի հարկի հավաքագրման ցածր տոկոսը կախված է այն հանգամանքից, որ մեծ թվով սեփականատերեր բացակայում են համայնքից:

Գույքահարկ

2020թ. Շահումյան համայնքում գույքահարկի 7417.1 հազար դրամ պլանի դիմաց հավաքագրվել է 6496.9 հազար դրամ կամ հավաքագրումը կատարվել է 87.6% -ով, 2019թ. հավաքագրումը կազմել է 5890.2 հազար դրամ կամ 98.5%: 2019թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 110.3%, կամ նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 606.7 հազար դրամ, որը պայմանավորված է համայնքում փոխադրամիջոցների ավելացման հետ:

Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի հավաքագրման մակարդակը 2020թ.-ին կազմել է 104.2%, կամ նախատեսված 239.0 հազ. դրամի դիմաց հավաքագրվել է 249.0 հազ. դրամ, որի համեմատությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմում է 131.3%, կամ փաստացի հավաքագրումը 2019թ. նկատմամբ ավել է 59.3 հազար դրամով: Թվով 6 խանութներից գանձվել են՝ ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության և 2 ռեստորանային համալիրներից հանրային սննդի օբյեկտներում ոգելից խմիչքի իրացման թույլտվության համար տեղական տուրքեր:

Հողի վարձակալություն

2020թ. համայնքում հողի վարձակալության հավաքագրումը 1522.0 հազ. դրամ պլանի դիմաց կատարվել է 1615.2 հազար դրամ կամ 106.1%, 2019թ.-ին հավաքագրումը կազմել է 1701.0 հազար դրամ կամ 130.8%: 2019թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել 95%, կամ պակաս է հավաքագրվել 85.8 հազար դրամ:

Տեղական վճարներ

Տեղական վճարների մեջ մտնում է աղբահանությունը, ծնողական գումարը, անասնաբուժական ծառայությունը, աճուրդի և մրցույթի մասնակցության վճարներ և այլն:

Տեղական վճարները 2020թ. համար նախատեսված 2480,0 հազ. դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 1010.8 հազ. դրամ, կամ կատարվել է 40.8%-ով: 2019թ-ի համեմատությամբ հավաքագրումը կազմել 41.5%, կամ պակաս է հավաքագրվել 1422.9 հազար դրամ: Որից՝ 2020թ-ին աղբահանության համար նախատեսված 920,0 հազ. դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 494.6 հազ. դրամ, կամ կատարվել է 53.8%-ով: Ծնողական վճարների համար նախատեսված 960,0 հազ. դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 307.7 հազ. դրամ, կամ կատարվել է 25.6%-ով: Պլանը թերակատարվել է համաճարակի պատճառով: Անասնաբուժական ծառայության համար նախատեսված 600,0 հազ. դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 54.6 հազ. դրամ, կամ կատարվել է 9.1%-ով: Տույժ տուգանքների համար նախատեսված 10,0 հազ. դրամ եկամտի դիմաց փաստացի հավաքագրում չի կատարվել:

ԴՈՏԱՑԻԱ

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով 2020թ-ին Շահումյան համայնքին է տրամադրվել 62960.6 հազ. դրամ դոտացիա:

2. 2020 Թ-ԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՍԵԼԱՎԱՏԱՐԵՐ

Իրականացվել է բուժ. ամբուլատորիային հարակից հեղեղատարի մաքրման աշխատանքներ՝ ընդհանուր 300.0 հազար դրամ արժողությամբ: Կատարվել է Տանձուտ գետի հունի մաքրման աշխատանքներ 780.0 հազ դրամ, որից 40.0 հազ. դրամը կատարվող աշխատանքի նախահաշվի մշակման համար:

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Սուբվենցիոն ծրագրով կատարվել է 1-ին փողոցի սկզբնամասին մոտ 500 մետր երկարությամբ ճանապարհի ասֆալտապատում, ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 36199,0 հազ. դրամ, որից համայնքի բյուջեից կատարվել է հատկացում 16289.5 հազ. դրամ, իսկ 19909.5 հազ. դրամ հատկացվել է պետական բյուջեից որպես սուբվենցիա: Կատարվել է ներհամայնքային ճանապարհների հարթեցման աշխատանքներ, որի համար ծախսվել է 680.0 հազ. դրամ:

Համայնքի 6-րդ փողոցի վերջնամասից դեպի Ղազախի թալա տանող ճանապարհի մաքրման և հարթեցման աշխատանքների համար ծախսվել է 864.0 հազ. դրամ:

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղբահանությունն իրականացվում է համայնքի սեփականությունը հանդիսացող բեռնատար ինքնաթափ մեքենայով, շրջիկ ձևով՝ շաբաթական 2 անգամ: Աղբահանության իրականացման մեքենայի պահպանման և վառելիքի համար ծախսվել է 648.0 հազ. դրամ:

Իրականացվել է Դիլիջան մայրուղու և նոր գերեզմանատան հարակից տարածքի մաքրման և աղբահանման աշխատանքներ՝ 200.0 հազ դրամ արժողությամբ:

ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Փողոցների լուսավորության սպասարկման և պահպանման համար ծախսվել է 450.0 հազ. դրամ, որի մեջ մտնում է սպասարկում իրականացնողի մատուցած ծառայության վճարը, լամպերը և մալուխները: Լուսավորության էլեկտրաեներգիայի ծախսը կազմում է 380.0 հազ. դրամ:

<<ԿՐԹԱՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ>> ՀՈԱԿ

,,Կրթամարզամշակութային համալիր,,-ի մեջ մտնում են մշակույթի տունը և մանկապարտեզը: Մշակույթի տանը գործում են երգի, պարի, ըմբշամարտի, կերպարվեստի, կավագործության և կիթառի խմբակներ, ուր հաճախում են մոտ 85 երեխա, գրադարանը և կիրակնօրյա դպրոցը: Սակայն համավարակի պատճառով

դադարեցվեցին խմբակները, վերաբացելուց հետո երեխաների քանակ զգալիորեն կրճատվել է:

Մանկապարտեզը գործում է 2018թ-ի սեպտեմբերից, հաճախում է 25 երեխա:Համավարակը այստեղ նույնպես բացասական ազդեցություն թողեց:

Կրթամարզամշակութային համալիրի պահպանման, աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձի, երեխաների սննդի և այլ ծախսերի համար համայնքի բյուջեից տրվել է դրամաշնորհ՝ 18591.0 հազ դրամ:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Համայնքում մշտապես իրականացվել են բազմաբնույթ միջոցառումներ կապված տոնական և հիշատակի օրերի հետ: Հունվարի 28-ին՝ հայկական բանակի օրվա կապակցությամբ զոհված ազատամարտիկների ընտանիքներին հատկացվել է դրամական օգնություն:

Մայիսի 9-ին եռատոնի կապակցությամբ պատերազմի մասնակիցներին և ազատամարտիկներին ևս տրվել է դրամական օգնություն:

Ամանորին կազմակերպվել է միջոցառում և համայնքի 1-7 տարեկան երեխաներին տրվել են ամանորյա տոպրակներ թվով 280 հատ, որը կազմել է 308.0 հազ դրամ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Առաջին դասարան հաճախող թվով 27 երեխաներին հատկացվել է դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ՝ ծախսվել է 405.0 հազ. դրամ: Գուգարաց թեմի առաջնորդարանի կողմից կազմակերպվել է կնունքի արարողություն և կնքվող երեխաներին տրվել է արծաթյա խաչեր:

Թվով 18 շրջանավարտներին հատկացվել է հուշանվերներ՝ ծախսվել է 243 հազ. դրամ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

2020թ-ի ընթացքում համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվել է 2350.0 հազ. Դրամ սոցիալական օգնություն:

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքը սպասարկում է մեկ անասնաբույժ, որի կողմից մատուցված ծառայության համար բյուջեից վճարվել է 492.0 հազ. դրամ:

Շահումյան համայնքի ղեկավար՝ Է. Մանուկյան

Հավելված 2
Շահումյան համայնքի ավագանու
2021 թ-ի փետրվարի 26-ի թիվ 04-Ա որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շահումյան համայնքի 2017-2021թթ. սոցիալ տնտեսական զարգացման հնգամյա ծրագրում ընդգրկված են թվով 7 առաջնահերթ խնդիրներ (ծրագրեր), որոնց իրականացման վերաբերյալ ստորև ներկայացնում եմ տեղեկատվություն:

1-ին ծրագիրը՝ ,,Համայնքի տարածքով անցնող գետը բերվածքներից մաքրելու, ափերը ամրացնելու ծրագիրն,, իրականացվել է, սակայն աշխատանքները շարունակական են, քանի որ գարնանը ձնհալներից և հորդառատ արձրևներից հնարավոր է գետը վարարի և դուրս գա ափերից:

2-րդ ծրագիրը՝ ,,Համայնքի կենտրոնական ճանապարհի ասֆալտապատումը,, 2020թ-ին իրականացվել 480 մ երկարության ճանապարհահատվածում: Ասֆալտապատման աշխատանքներն իրականացվել են սուբվենցիոն ծրագրերի շրջանակում, ծրագրի արժեքը կազմել է 36 200 000 ՀՀ դրամ, որից 16 290 000 դրամը՝ համայնքի բյուջեից, իսկ 19 910 000 դրամը՝ պետության կողմից հատկացված սուբվենցիայի հաշվին: 2021թ-ին նախատեսվում է շարունակել կենտրոնական ճանապարհի ասֆալտապատումը:

3-րդ ծրագիրը՝ ,,Մանկապարտեզի համար գույքի ձեռքբերում,,, իրականացվել է ամբողջությամբ:

4-րդ ծրագիրը՝ ,,Գյուղատնտեսության զարգացման խթանումը համայնքում,,, չի իրականցվել կոպերատիվի չկազմավորման պատճառով:

5-րդ ծրագիրը՝ ,,Հին գերեզմանատան փլուզման վերականգնում, ցանկապատի վերանորոգում,, , իրականացվել է ամբողջությամբ:

6-րդ և 7-րդ ծրագրերը՝ ,,Փողոցների լուսավորություն,, և ,,Տրակտորի ձեռքբերում,, իրականացվել են:

Շահումյան համայնքի ղեկավար՝ Է. Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 05-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով՝ **ավագանին.**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել Շահումյան համայնքի 2021թ-ի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 06-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավագանու անդամ Կամո Մանվելյանը 2020թ-ին հրավիրված 11 նիստերից բացակայել է 7-ին, Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Շահումյան համայնքի ավագանու անդամ Կամո Մանվելյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնել՝ 2020թ-ի ընթացքում ավագանու նիստերի ավելի քան կեսից անհարգելի բացակայելու պատճառով:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 07-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հեդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետությն օրենքի 7-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյանի համայնքի ավագանու 2013 թվականի հունիսի 25-ի ,,Շահումյանի գյուղապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 15-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 08-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել Շահումյան համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն 1 հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Համայնքի ղեկավար՝ **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Հավելված 1
Շահումյան համայնքի ավագանու
«26» փետրվարի 2021թ. N 08-Ա որոշման

2020թվականի Օգոստոսի 10-ից մինչև 2021թ-ի փետրվարի 26-ը ձեռք բերված հիմնական միջոցների ցանկ

Հ/Հ	Հիմնական միջեցի անվանումը	Ձեռքբերման տարեթիվը	Առկայությունը		Արժեքը /հազ. դրամ/
			Փաստացի (քանակը)	հաշվապահական տվյալներով (քանակը)	
1	1 փողոցի սկզբնամասի ասֆալտապատում 480 գծ. մետր	2021	1	1	34655.0
2	Համակարգիչ intel i3/8gb/ssd/dvd	2021	1	1	272.0
3	Մոնիտոր 200V4QSBR Philips 19.53	2021	1	1	52.1
4	Հոսանքի սնուցման անխափան սարք UPS	2021	1	1	46.7
Ընդամենը			4	4	35025.8

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ-ՀԱՇՎԱՊԱՀ Ս. ՍՈՍՅԱՆ